ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
2014 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 3

ԲԱԺԻՆ 2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 6

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 6

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 8

ԲԱԺԻՆ 3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 9

3.1. Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 10

3.2. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 11

3.3. Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 12

3.4. Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 12

3.5. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 13

3.6. Երևան ՀԷԿ 1-ի վերազինման աշխատանքներ 14

3.7. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 15

3.8. Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ 19

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 20

Եզրակացություններ 21

Հղումներ օգտագործված նյութերին 22

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2015 թվականի աշխատանքային ծրագրի 27-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2014-2018 թվականների ներդրումային ծրագրի 2014 թվականի հատվածի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014-2018 թվականների ներդրումային ծրագիրը **[Որոշում 2, Որոշում 3, Եզրակացություն]** և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը **[Հաշվետվություն]**:

ԲԱԺԻՆ 1.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող ՀԷԿ-երի վերականգնման և վերազինման, անվտանգության բարձրացման, էլեկտրատեխնիկական, հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինման, հիդրոտեխնիկական կառուցվածքների, շենքերի և շինությունների կառուցման և վերականգնման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել

նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենա-մեխանիզմների, ՀԷԿ-երի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, տնտեսական բնույթի սարքավորումների, գործիքների, համակարգչային տեխնիկայի և տնտեսական գույքի ձեռքբերման ուղղությամբ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված էր իրականացնել 5 469,7[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- «Սևան» ՀԷԿ-ի վերազինում՝ 1 675,0 մլն դրամ,
- «Հրազդան» ՀԷԿ-ի վերազինում՝ 811,0 մլն դրամ,
- «Արգել» ՀԷԿ-ի վերազինում՝ 766,0 մլն դրամ,
- «Արզնի» ՀԷԿ-ի վերազինում՝ 608,6 մլն դրամ,
- «Քանաքեռ» ՀԷԿ-ի վերազինում՝ 31,8 մլն դրամ,
- «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերականգնում՝ 1 349,6 մլն դրամ,
- ընկերության աշխատանքների կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 227,6 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2014 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

Գրաֆիկ 1



[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից ներդրումների մեծ մասը՝ 2 434,6 մլն դրամ, նախատեսվում էր ուղղել ՀԷԿ-երում էլեկտրատեխնիկական սարքավորումների՝ մասնավորապես գեներատորների ստատորների փաթույթների փոխարինմանը, գրգռման համակարգերի արդիականացմանը, մաշված սարքավորումների փոխարինմանը և հիդրոտեխնիկական կառույցների՝ 2 278,5 մլն դրամ, մասնավորապես Հրազդան, Արզնի ՀԷԿ-երի դերիվացիոն ջրանցքների և Երևան ՀԷԿ-1-ի ջրամբարի մաքրման և պատվարի շինությունների վերակառուցմանը: Համաձայնեցված ներդրումների 482,9 մլն դրամը նախատեսված էր հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինման նպատակով: Նախատեսվում էր Հրազդան ՀԷԿ-ում արդիականացնել գնդաձև փականների ղեկավարման վահանները՝ 139,9 մլն դրամ, վերակառուցել Արգել ՀԷԿ-ի տուրբինային առանցքակալները՝ 61,4 մլն դրամ և Երևան ՀԷԿ-1-ում փոխարինել պատվարի աղբապահ ճաղավանդակը, աղբահան մեքենան և վերակառուցել վահանները՝ 281,6 մլն դրամ:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսվում էր ընկերության բնականոն աշխատանքների կազմակերպման նպատակով մեքենաների, մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի և այլ գույքի ձեռք բերում՝ 227,6 մլն դրամ, և շենքերի, շինությունների վերակառուցում՝ 46,0 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 2.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2014 թվականի ընթացքում կատարել է 5052,9 մլն դրամի ներդրումներ՝ նախատեսվածի 92%-ը, որի արդյունքում շահագործման են հանձնվել 4 740,8 մլն դրամի հիմնական միջոցներ և իրականացվել են 4,8 մլն դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած 312,1 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեց-ված և ընկերության կողմից փաստացի իրականացված և շահագործման հանձնված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժո-ղովի հետ համաձայնեց-ված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականա ցված՝ ավարտ ված ներդրում-ներ	Ծրագրի կատար-ման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2014թ.	2014թ. սկզբի դրու-թյամբ (մնա ցորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	1 675.0	1 652.1	99%	1 438.4	299.1	1 737.5
2	Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	811.0	812.6	100%	777.3	48.8	826.1
3	Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	766.0	-	-	-	-	-

Աղյուսակ 1
(շարունակություն)

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2014թ.	2014թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
4	Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	608.6	644.0	106%	342.3	319.6	662.0
5	Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	31.8	-	-	-	-	-
6	Երևան ՀԷԿ-1-ի վերականգնում	1 349.6	1 412.9	105%	451.7	1 156.5	1 608.1
7	Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	227.6	219.2	96%	95.8	123.4	219.2
	Ընդամենը	5 469.7	4 740.8	87%	3 105.5	1 947.4	5 052.9

Աղյուսակ 1-ից երևում է, որ ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 87%-ով: Ներդրումային ծրագրի Արգել և Քանաքեռ ՀԷԿ-երում 2014 թվականի ընթացքում աշխատանքներ չեն իրականացվել:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ**	**1 947.4**	**39%**	**1 661.0**	**33%**
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**2 813.0**	**56%**	**2 813.0**	**56%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**93.9**	**2%**	**93.9**	**2%**
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**198.6**	**4%**	**172.9**	**3%**
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	3.3		3.3	
4.2	*նյութական ծախսումներ*	11.6		11.6	
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	-		-	
4.4	*նախագծային աշխատանքներ*	14.6		11.6	
4.5	*այլ*	169.1		146.3	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5 052.9**		**4 740.8**	

Աղյուսակ 2-ից երևում է, որ Ընկերության կողմից 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքների մեծ մասն իրականացվել է կապալառու կազմակերպությունների կողմից: Շահագործման են հանձնվել ներդրումային ծրագրով համաձայնեցված աշխատանքների իրականացմանն ուղղված նախորդ տարիներին իրականացված 1 661,0 մլն դրամի

աշխատանքներ: 2014 թվականին աշխատանքի վճարման գծով և նյութական ծախսումներն ամբողջությամբ ավարտված աշխատանքների մասով են:

ԲԱԺԻՆ 3.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ընկերության կողմից ներկայացված հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Սևան», «Հրազդան», «Արզնի» և «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-երում և կայանների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղված 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքներում 2014 թվականի իրականացված ներդրումներին համապատասխան կապիտալացվել են 146,3 մլն դրամի վարկի տոկոսներ, իսկ նախորդ տարիներին իրականացված և 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքներին համապատասխան կապիտալացվել է 90,7 մլն դրամ: Նշված տոկոսները սակագնով փոխհատուցման ենթակա չեն, քանի որ, համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի, ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների արդյունքում շահագործման հանձնված հիմնական միջոցների մնացորդային արժեքի նկատմամբ յուրաքանչյուր տարի կկիրառվի 10 տոկոս շահույթի նորմա՝ մինչև հարկումը: Այսինքն, ներդրումների նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների սպասարկման ծախսերի սակագնով փոխհատուցման հարցն արդեն իսկ կարգավորված է վերը նշված որոշմամբ:

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից ենթակա են նվազեցման նաև 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքների մասով կապիտալացված 3,3 մլն դրամ ծավալով աշխատավարձի գումարը, քանի որ ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի 2014 թվականի մեծության հաշվարկման ժամանակ սակագնի ծախսային հոդվածներում արդեն իսկ ներառված է ընկերության աշխատողների փաստացի թվաքանակով հաշվարկված միջին աշխատավարձը:

Հաշվի առնելով, որ 2013 թվականի ներդրումային գործունեության վերլուծության ժամանակ չհամաձայնեցված լինելու հիմքով նվազեցված 211,8 մլն դրամ ծավալով աշխատանքները համաձայնեցված են Ընկերության 2014-2018 թվականների ներդրումային ծրագրով, և ևս 110,6 մլն դրամ նախկինում իրականացված և համաձայնեցված ներդրումները շահագործման են հանձնվել 2014 թվականին դրանք նույնպես ուսումնասիրվել են սակագնով փոխհատուցման տեսանկյունից: Արդյունքում նշված աշխատանքներից 229,8 մլն դրամը ենթակա է ներառման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալում, իսկ 92,6 մլն դրամ նվազեցվել է աշխատանքի վճարման գծով կապիտալացված ծախսումների, կապիտալացված վարկի տոկոսների և ակտերի ուսումնասիրության արդյունքում:

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2014 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1. Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Սևան» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 1 675,0 մլն դրամ էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման և խմելու ջրի խողովակաշարի վերականգնման ուղղությամբ: Նախատեսված աշխատանքների մեծ մասն ավարտվել է, մասնավորապես փոխարինվել են № 1 և № 2 գեներատորների ստատորների փաթույթները՝ 1 216,2 մլն դրամ, և արդիականացվել են նշված գեներատորների գրգռման համակարգերը՝ 435,9 մլն դրամ:

№ 1 և № 2 գեներատորների ստատորների փաթույթների փոխարինման ուղղված ներդրումները 4,0 մլն դրամով գերազանցում են համաձայնեցված ներդրումների ծավալը: 2014 թվականի ներդրումային ծրագրով համաձայնեցվել են նաև 2013 թվականին իրականացված №4 դրենաժային պոմպի էլեկտրաշարժիչի և խմելու ջրի ողջ խողովակաշարի վերականգնման ուղղությամբ ներդրումները, որոնց ուղղությամբ 6,0 մլն դրամ ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա է 3,5 մլն դրամը: Մնացած 2,5 մլն դրամը

աշխատանքի վճարման գծով ծախսումներ են, որոնք չեն ներառվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Համաձայն Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության նշված ենթաուղղությամբ 2014 թվականին կապիտալացված վարկի տոկոսները կազմում են 68,6 մլն դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, նշված ենթաուղղությամբ 72,6 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Արդյունքում, «Սևան» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներից սակագնով փոխհատուցման է ենթակա 1 583,0 մլն դրամ:

3.2. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Հրազդան» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 811,0 մլն դրամ՝ ՀԷԿ-ի հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների արդիականացման, հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման, ինչպես նաև շենքերի, շինությունների կառուցման, վերակառուցման ուղղությամբ: Նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և հանձնվել շահագործման:

Համաձայն Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության «Հրազդան» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների ուղղությամբ աշխատանքի վճարման գծով ծախսումները կազմում են 3,3 մլն դրամ, իսկ 2014 թվականի ներդրումներին համապատասխան կապիտալացված վարկի տոկոսները՝ 17,2 մլն դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, նշված ենթաուղղությամբ 20,5 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

2014 թվականի ներդրումային ծրագրով համաձայնեցվել են նաև 2013 թվականին իրականացված ՀԷԿ-ի նոր պահակային շինության կառուցման ուղղությամբ ներդրումները, որի ուղղությամբ իրականացված 2,0 մլն դրամի ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա է 0,9 մլն դրամը: Մնացած 1,1 մլն դրամը աշխատանքի վճարման գծով ծախսումներ են, որոնք չեն ներառվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Արդյունքում, «Հրազդան» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներից սակագնով փոխհատուցման է ենթակա 793,0 մլն դրամ, որից 792,1 մլն դրամ 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքներից, իսկ 1,0 մլն դրամը՝ 2013 թվականին շահագործման հանձնված:

3.3. Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Արգել» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 766,0 մլն դրամ՝ ՀԷԿ-ի հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների վերակառուցման, էլեկտրատեխնիկական սարքավորումների արդիականացման և մեխանիզմների ձեռքբերման նպատակով: Համաձայնեցված աշխատանքները 2014 թվականին չեն իրականացվել:

Նշված ուղղությամբ 2013 թվականին իրականացված ՀԷԿ-ի №1 և 2 տուրբինային առանցքակալների վերակառուցման ուղղությամբ 61,4 մլն դրամի ներդրումները, որոնք ևս համաձայնեցված են 2014 թվականի ներդրումների ծավալներում ենթակա են սակագնով փոխհատուցման:

Արդյունքում, «Արգել» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներից սակագնով փոխհատուցման է ենթակա 61,4 մլն դրամ՝ 2013 թվականին իրականացված ներդրումներից:

3.4. Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Արզնի» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 608,6 մլն դրամ՝ հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման և շենքեր, շինությունների կառուցման նպատակով: Նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և հանձնվել շահագործման: Մասնավորապես դերիվացիոն ջրանցքների վերականգնման աշխատանքները շահագործման են հանձնվել 2014 թվականին՝ 644,0 մլն դրամ ծավալով, իսկ ՀԷԿ-ի աղբահավաքի կառուցման աշխատանքները՝ 2013 թվականին, 0,6 մլն դրամ ծավալով:

Նշված ենթաուղղությամբ դերիվացիոն ջրանցքների վերականգնման սկզբնական փաստաթղթերում ներկայացված որոշ նյութերի և աշխատանքների գների ուսումնասիրության և դրանց շուկայական գների համեմատության արդյունքում 37,3 մլն դրամը ենթակա է նվազեցման փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Համաձայն Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության «Արզնի» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների ուղղությամբ 2014 թվականի ներդրումներին համապատասխան կապիտալացված վարկի տոկոսները կազմում են 44,8 մլն դրամ: Հաշվի առնելով վերոգրյալը, նշված ենթաուղղությամբ 2014 թվականին իրականացված աշխատանքներից 99,2 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Այս ուղղությամբ ուսումնասիրվել են նաև 2013 թվականին իրականացված աղբահավաքի կառուցման ներդրումները՝ 0,6 մլն դրամ, որոնք ներառված են 2014 թվականի ներդրումային ծրագրում: Նշված ծավալում 0,3 մլն դրամ աշխատանքի վճարման գծով ծախսումները նվազեցվել են փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Մնացած 0,3 մլն դրամը ենթակա է ներառման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Արդյունքում, «Արզնի» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներից սակագնով փոխհատուցման է ենթակա 562,3 մլն դրամ, որից 562,0 մլն դրամ 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքներից, իսկ 0,3 մլն դրամը՝ 2013 թվականին շահագործման հանձնված:

3.5. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Քանաքեռ» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 31,8 մլն դրամ՝ էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման և շենքեր, շինությունների կառուցման նպատակով:

Նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են և 2013 թվականին հանձնվել են շահագործման:

ՀԷԿ-ում փոխարինվել են 120 հատ մարտկոց ընդհանուր 28,0 մլն դրամ արժեքով: Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը նվազեցվել է 0,4 մլն դրամով:

«Քանաքեռ» ՀԷԿ-ի աղբահավաքի կառուցման ուղղությամբ 3,8 մլն դրամի ներդրումներից աշխատանքի վճարման գծով ծախսումները 0.9 մլն դրամ են:

Հաշվի առնելով վերոգրյալը, նշված ենթաուղղությամբ 1,3 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Արդյունքում, «Քանաքեռ» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներից սակագնով փոխհատուցման է ենթակա 30,5 մլն դրամ:

3.6. Երևան ՀԷԿ 1-ի վերականգնման աշխատանքներ

«Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերականգնման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 1 349,6 մլն դրամ հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումների փոխարինման և վերակառուցման, էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման, հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման, շենքեր, շինությունների կառուցման ուղղությամբ: Նախատեսված աշխատանքների մեծ մասն ավարտվել է, մասնավորապես փոխարինվել են պատվարի աղբապահ ճաղավանդակը և վերակառուցվել են վահանները՝ 169,8 մլն դրամ, փոխարինվել է պատվարի աղբապահ մեքենան՝ 128,9 մլն դրամ: Փոխարինվել են №1 և 2 սեփական կարիքների տրանսֆորմատորի բջջի սարքավորումները՝ 17,1 մլն դրամ: Շահագործման հանձնված աշխատանքների մոտ 80%-ը ջրամբարի մաքրման և պատվարի շինությունների վերակառուցման աշխատանքներն են՝ 1 097,1 մլն դրամ:

Նշված ենթաուղղությամբ շին-մոնտաժային աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյուքնում պարզվել է, որ ջրամբարի մաքրման նպատակով բերուկների թափոնավայր տեղափոխման հեռավորությունը ընդունված է 15 կմ: Սակայն համաձայն Հանձնաժողովի աշխատակազմի իրականացրած ուսումնասիրության ջրամբարի և

թափոնավայրի հեռավորությունը կազմում է 13 կմ: Նշվածի արդյունքում ջրամբարի մաքրման աշխատանքների արժեքը նվազեցվել է 65,5 մլն դրամով:

Բացի վերը նշվածը, համաձայն Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության, «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների ուղղությամբ 2014 թվականի ներդրումներին համապատասխան կապիտալացված վարկի տոկոսները կազմում են 87,8 մլն դրամ: Իսկ 4,1 մլն դրամը գերազանցել է նախապես համաձայնեցված ներդրումների ծավալները: Հաշվի առնելով վերոգրյալը, նշված ենթաուղղությամբ 157,3 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ում իրականացված 1,5 մլն դրամ արժեքով աղբահավաքի կառուցման և «Արզնի» ՀԷԿ-ում աղբահավաքի կառուցման աշխատանքների և դրանց տեխնիկական հարաչափերի ուսումնասիրության արդյունքում այս ուղղությամբ հիմնավորված ներդրումների ծավալը ընդունվել է հավասար «Արզնի» ՀԷԿ-ում իրականացված աշխատանքի ծավալին՝ 0,3 մլն դրամ:

Արդյունքում, «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներից սակագնով փոխհատուցման է ենթակա 1 255,9 մլն դրամ, որից 1 255,6 մլն դրամը 2014 թվականին շահագործման հանձնված աշխատանքներից, իսկ 0,3 մլն դրամը՝ 2013 թվականին շահագործման հանձնված:

3.7. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով 2014 թվականին համաձայնեցված էր 227,6 մլն դրամ մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման, կայանների անվտանգության մակարդակի բարձրացման, ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների, գրասենյակային կահույքի, բջջային հեռախոսների և հաշվապահական ծրագրերի ձեռքբերման նպատակով:

Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 146,1 մլն դրամ հետևյալ ենթաուղղություններով.

Աղյուսակ 4
մլն դրամ

№	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ		Ընդամենը ձեռքբերված	
		Քանակ	Գումար	Քանակ	Գումար
1	2	3	4	5	6
1	**Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում**		**146.1**		**56.7**
1.1	Բեռնամարդատար մեքենա	2	14.1		-
1.2	Միկրոավտոբուս	1	12.0		-
1.3	Մարդատար մեքենա	2	15.0		56.7
1.3.1	Ավտոմեքենա TOYOTA LC 150 4,0 GAS			1	23.8
1.3.2	Ավտոմեքենա NISSAN PATHFINDER			1	19.4
1.3.3	Ավտոմեքենա TOYOTA CAMRY 2,5 GAS			1	13.5
1.4	Ինքնաթափ	2	70.0		-
1.5	Ավտոբետոնախառնիչ	1	35.0		-

2014 թվականին ձեռք են բերվել 3 մարդատար մեքենաներ՝ 56,7 մլն ընդհանուր արժեքով: Ձեռքբերված մարդատար մեքենաներից 19,4 մլն դրամ արժեքով Նիսան Փաթֆայնդեր մակնիշի մեքենայի ձեռքբերումը համաձայնեցված չէր ներդրումային ծրագրով, իսկ 37,3 մլն դրամ ընդհանուր արժեքով 2 Տոյոտա մակնիշի մեքենաների ձեռքբերման արժեքները 22,3 մլն դրամով գերազանցում են համաձայնեցված ծավալները: Հաշվի առնելով վերոգրյալը, 2014 թվականին ձեռքբերված մեքենաների ծավալներից 41,7 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

2013 թվականին ձեռքբերված 6.1 մլն դրամ արժեքով ՈՒԱԶ-3909 մակնիշի ապրանքամարդատար մեքենայի և 23,6 մլն դրամ արժեքով միկրոավտոբուսի ձեռքբերումը համաձայնեցված էր 2014 թվականի ներդրումների ծավալներում: Միկրոավտոբուս ձեռքբերման գինը գերազանցում է համաձայնեցված ներդրումների ծավալը, ուստի 11,6 մլն դրամը չի ներառվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Արդյունքում, նշված ենթաուղղությամբ ձեռքբերված ներդրումներից սակագնով փոխհատուցման է ենթակա 33,1 մլն դրամ, որից 15,0 մլն դրամ 2014 թվականին ձեռքբերված մեքենաների արժեքից, իսկ 18,1 մլն դրամը՝ 2013 թվականին ձեռքբերված:

Կայանների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ 2014 թվականի ընթացքում համաձայնեցված էր 7,8 մլն դրամ: Փաստացի իրականացվել է 118,8 մլն դրամի ներդրում: Հաշվի առնելով, որ Ընկերությունը 2012 թվականին համաձայնեցված և իրականացված ներդրումները շահագործման է հանձնել 2014 թվականին, ուստի դրանք դիտարկվել են սակագնով փոխհատուցման տեսանկյունից: Ներկայացված ծավալներում կապիտալացված վարկի տոկոսները կազմում են 18,7 մլն դրամ, որոնք ենթակա են նվազեցման:

Արդյունքում, նշված ենթաուղղությամբ սակագնով փոխհատուցման է ենթակա 109,2 մլն դրամ:

ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 20,4 մլն դրամ շարժիչների, պոմպերի, ներանցիչների, ամբարձիչների, վերհան հարթակների ձեռքբերման նպատակով: 2014 թվականի ընթացքում ձեռք են բերվել 11,9 մլն դրամի տարաբնույթ սարքավորումներ:

Ձեռքբերված ծավալներում ներկայացված են 4,8 մլն դրամ ընդհանուր ծավալով էլեկտրական էներգիայի եռաֆազ հաշվիչ, խոտհնձիչ, վառելիքի լիցքավորման սյունյակներ, մետաղական բաքեր և այլ սարքավորումներ, որոնք ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Արդյունքում, նշված ենթաուղղությամբ ձեռքբերված ներդրումներից սակագնով փոխհատուցման է ենթակա 7,0 մլն դրամ:

Տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերման ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 1,1 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռքբերված սարքավորումների ընդհանուր արժեքը 2,1 մլն դրամ է: Փաստացի ձեռքբերումները 0,9 մլն դրամով գերազանցում են նախապես համաձայնեցված

ներդրումների ծավալները և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Արդյունքում, նշված ենթաուղղությամբ ձեռքբերված ներդրումներից սակագնով փոխհատուցման է ենթակա 1,1 մլն դրամ:

Լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 25,5 մլն դրամ համապատասխան ծրագրերով հագեցած նոր համակարգիչների և համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերման նպատակով: Հաշվետու տարում ձեռք են բերվել 8,3 մլն դրամ ընդհանուր արժեքով համակարգիչներ, մոնիտորներ, բազմաֆունկցիոնալ սարքեր և այլ աքսեսուարներ, իրականացվել է սերվերների վերազինում:

Նշված ենթաուղղությամբ 2013 թվականին համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված 13,3 մլն դրամի ներդրումները նույնպես դիտարկվել են սակագնով փոխհատուցման տեսանկյունից:

Արդյունքում, նշված ենթաուղղությամբ ձեռքբերված ծրագրերը, տեխնիկան և աքսեսուարներն 21,6 մլն դրամ ծավալով ենթակա են սակագնով փոխհատուցման:

Գրասենյակային կահույքի ձեռքբերման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 5,2 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 3,2 մլն դրամ ընդհանուր արժեքով սեղաններ, աթոռներ և պահարաններ, որոնք ամբողջ ծավալով ենթակա է սակագնով փոխհատուցման:

Հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 14,3 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 9,9 մլն դրամի սարքավորումներ և գործիքներ, որոնք ամբողջ ծավալով ենթակա են ներառման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներում:

Բջջային հեռախոսների ձեռքբերման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 0,6 մլն դրամ 30 հատ բջջային հեռախոս ձեռքբերելու նպատակով: Հաշվետու տարում ձեռք են բերվել 1,9 մլն դրամ ընդհանուր արժեքով 5 հատ բջջային հեռախոս, այդ թվում 2-ական IPhone 5s և IPhone 6, որոնց ձեռքբերումը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով և 0,34 մլն դրամ

արժեքով 1 բջջային հեռախոս, որի ձեռքբերման գինը 0,32 մլն դրամով գերազանցում է ներդրումային ծրագրով համաձայնեցված միավորի միջին գինը: Հաշվի առնելով վերոգրյալը, նշված ենթաուղղությամբ 1,8 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Արդյունքում նշված ենթաուղղությամբ ձեռքբերված բջջային հեռախոսների ծավալից սակագնով փոխհատուցման է ենթակա 20 հազ. դրամը:

Հաշվապահական ծրագրի ձեռքբերման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 6,5 մլն դրամ: Ձեռք է բերվել նախանշված ծավալով հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգչային 1C ծրագիր և իրականացվել են ծրագրի ներդրման աշխատանքներ: Նշված ենթաուղղությամբ ձեռքբերված հաշվապահական ծրագրի արժեքը՝ 6,5 մլն դրամ ամբողջությամբ ենթակա է փոխհատուցման:

3.8. Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ

Համաձայն փաստացի կատարված ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության 2014 թվականի ընթացքում իրականացվել են ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման հետ կապված 4,8 մլն դրամի բանկային ծախսեր:

Նշված ծախսերից 0,5 մլն դրամը դրամական փոխանցումների ուղղությամբ ծախսեր են, որոնք առաջացել են ներդրումային ծրագրով իրականացված աշխատանքների դիմաց վճարումների արդյունքում: Նշված 0,5 մլն դրամի ծախսերը ենթակա են ներառման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Մնացած 4.3 մլն դրամի ծախսերը ենթակա չեն ներառման ներդրումների ծավալում, քանի որ դրանք արտարժույթով ձեռքբերված ապրանքների և ծառայությունների ազգային արժույթով արտացոլման հետ կապված ծախսերն են, որոնք չեն ենթադրում ներդրումներ այլ ունեն հաշվարկային բնույթ:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4
մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**5 052.9**
2	**Անավարտ աշխատանքներ**	**312.1**
3	**2014 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**4 740.8**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**492.8**
4.1	Շուկայական գների մոնիթորինգի և սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ապրանքների և ծառայությունների արժեքներից նվազեցում	102.8
4.2	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	25.7
4.3	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	123.9
4.4	Վարկի տոկոսներ	237.0
4.5	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	3.3
5	**2014 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**4 248.0**
6	**Նախորդ տարիներից ներդրումներ**	**229.8**
7	**Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ**	**0.5**
8	**Իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**4 478.4**

Եզրակացություններ

Ամփոփելով «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ-ի ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ ընկերությունը 2014 թվականի ընթացքում ներդրել է մոտ 5 052,9 մլն դրամ, որից շահագործման են հանձնվել 4 740,8 մլն դրամի հիմնական միջոցներ՝ ներդրումային ծրագրով նախատեսված ծավալների 87%-ը: «Սևան», «Հրազդան», «Արզնի» և «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-երում նախատեսվող աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Ավարտված աշխատանքների 56%-ն իրականացվել է կապալառու կազմակերպությունների միջոցով:

Ավարտված աշխատանքների 50%-ն ուղղվել է «Հրազդան», «Արզնի» և «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-երի հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնմանը: Ներդրումների մյուս խոշոր մասը, 35%-ն, ուղղվել է «Արգել», «Քանաքեռ», «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-երում էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինմանն ու արդիականացմանը: Իսկ մնացած 15%-ը կազմում են հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումների արդիականացման, վերակառուցման և փոխարինման, շենքերի և շինությունների վերակառուցման, ինչպես նաև ընկերության բնականոն գոծունեությունն ապահովելու համար անհրաժեշտ աշխատանքները:

Այսպիսով, ներդրումային գործունեության վերլուծության արդյունքներով, 2014 թվականին ավարտված ներդրումների 90%-ը՝ 4 478,4 մլն դրամը, և 2013 թվականին շահագործման հանձնված ներդրումներից ևս 229,8 մլն դրամ ենթակա են սակագնով փոխհատուցման:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի №452Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2014-2018 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի №471Ա որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին».

Եզրակացություն- 2014 թվականի դեկտեմբերի 25-ի №ՌՆ-2918Լ գրությամբ ներկայացված եզրակացություն՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի նույն թվականի դեկտեմբերի 3-ի №2/9-0063 գրությամբ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

Հաշվետվություն - «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2015 թվականի փետրվարի 23-ի №2/9-007 գրությամբ ներկայացված հաշվետվությունը: